

Ե. ՉԱՐԵՆՅԻ ԱՆՎԱՆ ԴՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԴՐԱԴԱՐԱՆԸ

Ինչպես Սովետական Հայաստանի մշակութային շատ հաստատությունների, այնպես էլ Ե. Չարենյի անվան դրականության և արվեստի թանգարանի նախապատասխաններն սկսվում է Հայաստանում սովետական կարգի հաստատելու առաջին տարիներից, 1921 թ. Հայաստանի լուսժողովումտի հատուկ որոշմամբ հիմք է դրվում կուլտուր-սպամական թանգարանին, որի մի բաժինն էին կազմում հայ դրականությանն ու արվեստին վերաբերող ձեռագիր ու սպաղիր նյութերը։ Առաջին աշխատակիցների ու ղեկավարների ջանքերով Միության տարբեր քաղաքներից, թանգարանային այլևայլ նյութերի հետ, առանձին անհատներից հավաքվել և կենտրոնացվել է նաև հայ մշակույթի անցյալի գործիչների թողած դրական ժառանգությունը։ Ձևաբերված ձեռագիր և այլ նյութերի հետ այստեղ են կենտրոնացվել նաև դրականության և պարբերական մամուլի հավաքածուները։ Դա էլ, փաստորեն, դառնում է դրադարանի հիմքը, որն այժմ հարուստ մի շտեմարան է՝ դրականություն, արվեստի պատմություն ուսումնասիրողների համար։

1934—35 թթ. կուլտուր-սպամական թանգարանից անջատվում է ինքնուրույն թանգարաններ են դառնում պատմության և դրականության բաժինները։ Ընտրավորություն է ստեղծվում թանգարանի ձևադրապան հետ մեկտեղ հարստացնել և դրադարանը։ Թանգարանի առաջին ղեկավարները՝ մեծավաստակ բանասեր Նրվանդ Շահադիդը և դրականագետ Խորեն Սարգսյանը ձևադրապան են լինում տվելի ու ավելի կազմակերպված և տալու նյութերի հավաքմանն ու կենտրոնացմանը։

Երվանդ Շահադիդի ջանքերով ու Նոր Նախիջևանի քաղաքիկների և այլ հիմնարկների աջակցության շնորհիվ ստացվում է Միքայել Նալբանդյանի անձնական դրադարանի մի մասը՝ հայերեն, ռուսերեն և օտար լեզուներով մոտ 250 կտոր գիրք, այդ թվում՝ Աղաթանգեղոսի, Հազար փարպեցու, Ներսես Շնորհալու, Գրիգոր Նարեկացու, Ալիշանի, Գ. Այվազովսկու, Արսեն Բաղդասարյանի, Մինաս Բժշկյանի և այլոց աշխատությունները, ինչպես նաև մասնագիտական հնարավոր հրատարակությունները։ Նոր Նախիջևանից թանգարան է փոխադրվում նաև Ռ. Պատկանյանի անձնական դրադարանը։ Այս-

տեղ բազական սովոր բանակ են կազմում իր իսկ Պատկանյանի երկերը՝ Դատարակված Թիֆլիսում, Պետերբուրգում, Ռոստովում, Վիեննայում, Մարսելում։ Կան նաև հայատառ թուրքերեն գրքեր, բառարաններ, կրոնական աշխատություններ, Ընծայականներ և հետաքրքիր մակագրություններ կան իրեն ժամանակակից մշակութային գործիչների աշխատությունների վրա։ Հիշատակության է արժանի Պետրոս Աղամյանի «Ներսիսի» և իր Համլետ ողբերգությունը (Թիֆլիս, 1887), որ մեծ դերասանը սիրով նվիրել է Պատկանյանին։

Թիֆլիսից ժամանակին ստացվում է դրամատուրգ Գրիգոր Սունդուկյանի անձնական դրադարանը։ Այստեղ կան գրքեր, որոնցում առկա են Հովհաննես Թումանյանի, Ալեքսանդր Սատուրյանի, Սմբատ Շահադիդյանի, Շիրվանզադեի, Պերս Պոլոյանի, Կարապետ Կուսկյանի, Լեոյի, Գրիգոր Չախուրյանի, Գրիգոր Արծրունու և այլ բազմաթիվ հեղինակների ջերմ ու սրտառու մակագրությունները։

Ընտաքքի է Ցուրի Վեսելովսկու «Из истории армянской сцены. Тифлисский театр и бытовая комедия» գիրքը (հեղինակի ընծայականով), որի վրա կան Սունդուկյանի ձեռագրերով կատարված բազմաթիվ նշումներ և դիտողություններ։

Գրականության և արվեստի թանգարանում են պահվում Ստեփան Մալխասյանի, Բաֆու, Վահան Տերյանի, Բանաստեղծ Սարգիս Բամալյանի և այլոց, ինչպես նաև մշակույթի այլադրի գործիչների թեև փոքրաթիվ, բայց հետաքրքիր հավաքածուները։ Ուշագրավ է վերջերս Լենինգրադից ստացված Ցուրի Վեսելովսկու «Армянские беллетристи, драматурги и поэты» (М., 1894) գրքի 2-րդ հատորը, որը լուս առանձինը հետո հավաքվել և այրվել է յարական դրադանության կողմից։

1954 թ. դրականության թանգարանը անջատվեց Մ. Արեգյանի անվան դրականության ինստիտուտից, միանալով թատերական և երաժշտական թանգարաններին, վերանվանվեց դրականության և արվեստի թանգարան, հետագայում՝ Նդիշ Չարենյի անվան։

Այնուհետև ձեռք բերվեցին դրականագետ բանասերների և գրողների՝ Երվանդ Շահադիդյանի, Մ. Արեգյանի, Դերենիկ Դեմիրճյանի.

կարեն Միքայելյանի, Թարգմանիչ Հակոբ Խաչատրյանի և մշակութային այլ գործիչների արխիվներն ու անձնական գրադարանները Թանգարանի սեփականությունը դարձավ հուշակավոր քանաստեղծ Եղիշե Զարենցի բազմալեզու և բազմարժեք գրադարանի մի մասը՝ ուշագրավ մակագրություններով և ընծայականներով:

ՀԱՄԱԳԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ գրադարանի, Ալեքսանդր Մյասնիկյանի անվան իստորային գրադարանի, Մաշտոցի անվան Մատենադարանի տպագիր ֆոնդերից Թանգարանին չանձնվեցին սովետական և նախասովետական շրջանում հրատարակված բազմաթիվ գրքեր ու պարբերականներ:

Թրիլիսիի Շահումյանի անվան գրադարանից փոխանակման կարգով բերվեց և գրադարանին չանձնվեց XVIII դ. վերջի և XIX դ. սկզբների թիֆլիսում և այլուր հրատարակված պատմական, բանասիրական և ազգագրական բնույթի գրականություն:

Գրական, Թատերական և երաժշտական Թանգարանների միացմամբ բնականաբար միացվեցին նաև նրանց գրադարանները:

Թատերական Թանգարանի դիրեկտոր, արվեստագետ Ս. Մելիքսեթյանը հավաքել ու հիմք է դրել Թատերագիտության գրադարանին: Այստեղ կան պարբերականներ, հանրագիտարանային բնույթի գրքեր, պիեսներ՝ հայ, ռուս և արևմտասեփրոպական հայտնի Թատերագիտների և Թատերագետների գործեր:

Ուշագրավ են Արուս Ոսկանյանի, Ռուզաննա Վարդանյանի, Վաղարշ Վաղարշյանի, Գրիգոր Ավետյանի, Գևորգ Փիրումյանի, Խաչիկ Սանդախչյանի, Տիգրան Շամիրխանյանի անձնական գրադարանները, որոնց իրենց բովանդակությամբ, գրքերի վրա արված նշումներով, մակագրություններով ու ընծայականներով բնութագրում են իրենց տեղերի հետաքրքրության սահմանները, գիտելիքներն ու ներքնաշխարհը:

Այսպես, Արուս Ոսկանյանին նվիրած իր «Սիլիստարի պարտեզները» գրքի վրա անվանի արձակագիր Զապել Եսայանը 18.11.35 թ. գրել է. «Սիլիսի Արուս Ոսկանյանին, մեր Թատրոնի զարդը, մեր ամենափայլուն աստղը, որուն նվիրում եմ իմ այս դիրքը, այն հույսով, որ ինձ իր հետ կհիշե մեր արևափայլ, գեղեցիկ և անգութ ծննդավայրը (Կ. Պոլսը)»:

Երաժշտական ռաժնի գրադարանի հիմնական ֆոնդը նախկին արվեստի սեկտորի գրադարանն է՝ հայերեն, վրացերեն, ռուսերեն և այլ լեզուներով արվեստագիտական, գրական, երաժշտական, ճարտարապետական բնույթի գրքերով:

Այստեղ կարելի է գտնել Կոմիտասի, Սպիրիդոն Մելիքյանի, Սաշա Օդանեղաշվիլու (Ալեք-

սանդր Հովհաննիսյան), երաժշտագետ Մ. Աշալյանի անձնական գրադարաններից թվով քիչ, սակայն արժեքավոր գրքեր. դարձյալ հետաքրքիր մակագրություններով և ընծայականներով:

Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի Թանգարանի գրադարանը աննախընթաց վերելք ապրեց 1955—1960 թթ., երբ առավել ճերտուցավ կապը սփյուռքահայ մշակույթի գործիչների և նրանց ժառանգների հետ: Եվ ահա Թանգարանը սփյուռքայության հետ մշակութային կապի կոմիտեի օժանդակությամբ հնարավորություն ունեցավ ձեռք բերելու մի շարք արխիվներ՝ ձեռագիր և տպագիր նյութեր և ամբողջական գրադարաններ:

Փարիզից ստացվեց գրող, գրականագետ Արշակ Զոպանյանի հարուստ արխիվը և գրադարանի մի մասը՝ մի քանի հազար հատոր: Այս ֆոնդում կան հայ գրականության կյանքի ներքին առաջին հրատարակություններ՝ Թումանյան, Իսահակյան, Շիրվանզադե, Տերյան. Զոհրապ, Վարուժան և այլն, հնատիպ գրքեր՝ հրատարակված 1700—1800 թթ., Վենետիկում, Պոլսում և այլուր: Այստեղ են նաև Ա. Զոպանյանի գրական, բանասիրական և պատմական աշխատությունների բոլոր հրատարակությունները, նաև խմբագրած, հրատարակած՝ «Անահիտ» ամսագրի լրիվ հավաքածուն, ինչպես նաև Պոլսում և այլուր հրատարակվող շաբաթաթերթեր՝ «Երիտասարդ հայուհի», «Հայ կին», Գահիրեի «Միությունը», Երուսաղեմի «Սիոն», «Հասկ», «Նյու-Յորք», «Հուլարար» և այլ ամսաթերթերի ու շաբաթաթերթերի հավաքածուներ:

Նույն ժամանակաշրջանում Պոլսից ստացվել է հեռուց Արսլանյանի գրադարանը, որն առանձնապես հարուստ է արևմտահայ գրողների գործերով և Պոլսում ու այլուր հրատարակված պարբերականների հավաքածուներով՝ «Բյուզանդիկ», «Վերջին լուր», «Նոր լուր», «Մասիս», «Հայ կին», «Հայաստանի կոչակ», «Հասկ», «Սիոն», «Բաղմավեպ», «Հանդես» ամսոթյա, Թերթեր, ամսաղեր, «Ատենագրություն» ազգային ժողովուրդ, զանազան տարեցույցներ, օրացույցներ և այլն:

Զի կարելի առանց երախտագիտության լիցիտի խոսել գրող, գրականագետ, խմբագիր հրատարակիչ Խորոս Աղադյանի ժառանգելու կողմից Պոլսից մեզ ուղարկված շատ հարուստ մոտ 10.000 կտորի հասնող զրադարան-հավաքածուի մասին:

Հայ միտրը, հայ մշակույթը տարիներ շարունակ նույն իր ժողովրդի տարադիր ռախտ է ունեցել: Ուր մի բուռ հայ, այնտեղ իր դրոշմը ու տպարանը, դրոշմ ու ուսուցիչը, դիրք ու ամսագիրը, օրաթերթն ու շաբաթաթերթը՝ եվ ահա Խորոս Աղադյանը մեծ ցանցով:

խնամքով հավաքել, ի մի է բերել աշխարհի ամենահեռավոր ծայրերում, ամենատարբեր ժամանակներում գրված ու տպագրված հայ գիրքը և ուղարկել Սովետական Հայաստան, իր իսկական տիրոջը՝ հայ ժողովրդին, իր մշտական հանգրվանը՝ դրականության և արվեստի թանգարան:

Դեղարվեստական գրքերի շարքում բավական ստվար թիվ են կազմում արևմտահայ հեղինակների ղործերը՝ Ալիշան, Տյուսար, Դուրյան, Պարոնյան, Ջապել Խսայան, Երվանդ Օտյան, Խլկաախնցի, Մ. Բաղդասարյան, Ռ. Ջարդարյան, Ս. Խրիմյան, Վ. Մայրգյան, Ա. Ցարճանյան (Սիսանյան), Լ. Շանթ, Ա. Չոպանյան, Մ. Պեղիկյան, Սիսիլ, Բարգմանություններից՝ Լաֆոնտեն, Նենկոն, Պոլ Ղր Քոթ, Դյուրբերալլ էոմեն Սյու, Դյումա (հայր և որդի), Դիկկենս, Լամարտին, Հաուստման, Կնուտ Համսուն, Հոմերոս, Շեքսպիր, Ռուս դրոշներին՝ Տոլստոյ, Զեյսով, Տուրգենև և այլ հեղինակների հայերեն թարգմանությունները:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Գահիրեի ստեղծած, համաշխարհային թատերագիտության զրադիտղ Վահան Հարեջանի զրադարանը: Այն մի հարուստ հավաքածու է՝ արևմտամիջոցական և Ասիայի առաջամոր

երկրների թատրոններին վերաբերող նյութերով:

Վերջին տասը տարիներին թանգարանի ղեկավարությունը աշխատել է արտացոլել զրադարանը՝ ղանազան մասնավոր զրադարաններից, առանձին անհատներից և մշակութային գործիչներից գնելով պարբերականների հավաքածուներ: Այժմ զրադարանը ստանում է Հայաստանում և Սովետական Միության մեջ լույս տեսնող 15 անուն օրաթերթ, 30 անուն ամսագիր՝ զրականագիտական, թատերական, երաժշտագիտական, պատմագիտական, քաղաքական բնույթի:

Գրադարանը սերտ կապերի մեջ է սփյուռքահայ 10 հաստատությունների հետ և փոխանակում է գրքեր և պարբերականներ:

Այսպիսով, Հայաստանի և Զարեցի անվան զրադանության և արվեստի թանգարանի զրադարանը 1935 թ. ունենալով ընդամենը 2—3 հազար կտոր գիրք և պարբերական, այսօր՝ 1970 թ., շրջանառության մեջ գրվող գրքերի և անհատական զրադարանների հետ միասին, զարձել է բաղադրել մի զրադարան՝ ճշ հազար կտոր պարբերականներով, գրքերով:

ԱՐԾՎԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ